

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է **Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության** մատուցման համար կազմակերպված **ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **16.10.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ** գնման պայմանագրում **2026 թվականի մարտի 12-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշում:

Փոփոխության նկարագրություն

N **ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ** պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ք. Երևան

« 12 » 03 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և **Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 16.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է հինգ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011047678, 900011047686, 900011047892,
900011047900, 900011048494, 900011048510,
900011048361, 900011047918, 900011048635,
900011048379, 900011048528
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝


Կ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն՝

Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.



